ԱՊԱՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԸ՝ ԿԱՆԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔ

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ատելության խոսքի, խտրականության, գենդերային կարծրատիպերի և ապատեղեկատվության վերարտադրումը լրատվամիջոցներում և սոցիալական ցանցերում բացասական ազդեցություն է ունենում ընտրական գործընթացների վրա՝ խաթարելով հատկապես կանանց մասնակցությունը ընտրություններին: Հայաստանի լրատվական դաշտում իրականացված մշտադիտարկումները և հետազոտությունները փաստում են, որ գենդերային ապատեղեկատվությունն ու առցանց ատելության խոսքը հատկապես նախընտրական շրջանում խորացնում են կանանց նկատմամբ խտրականությունը, նվազեցնում նրանց տեսանելիությունը ՁԼՄ-ներում և մեծացնում քաղաքական մասնակցությունից հրաժարվելու ռիսկը:

Այս քաղաքականության համառոտագիրը նպատակ ունի.

- Նվազեցնել ՁԼՄ-ներում և թվային միջավայրում կանանց նկատմամբ ատելության խոսքի, գենդերային ապատեղեկատվության և խտրականության դրսևորումները:
- Ուժեղացնել ընտրական գործընթացներում կանանց պաշտպանությունը առցանց բռնությունից և այլ խտրական գործելակերպերից:
- Ապահովել ընտրարշավներում կին և տղամարդ թեկնածուների ոչ խտրական և հավասարակշռված լուսաբանումը:
- Աջակցել ընտրական գործընթացների նկատմամբ վստահության բարձրացմանը և ժողովրդավարական ինստիտուտների կայունությանը:

Այս համառոտագիրը ստեղծվել է Եվրոպական միության և Equal Rights & Independent Media (ERIM) կազմակերպության ֆինանսական աջակցությամբ: Ներկայացված բովանդակության համար ողջ պատասխանատվությունը կրում է «Կանանց տեղեկատվական-վերլուծական ցանց» ՀԿ-ն, և պարտադիր չէ, որ այն արտացոլի Եվրոպական միության և ERIM-ի տեսակետները:

ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿ

Հայաստանյան լրատվական դաշտի ընդհանուր գնահատականը ներկայացված է **«Մամուլի ազատության ինդեքս 2026» զեկույցում**[1]**,** որի համաձայն՝ Հայաստանը, պահպանելով իր առաջատար դիրքը տարածաշրջանում, զբաղեցնում է 50-րդ հորիզոնականը, ինչը սակայն հետընթաց է նախորդ տարվա 34-րդ հորիզոնականի համեմատ: Զեկույցի գնահատականներով՝ Հայաստանում առկա է բազմակարծության միջավայր, սակայն լրատվամիջոցները շարունակում են քաղաքականապես խիստ բևեռացված մնալ, և երկիրը բախվում է ապատեղեկատվության և ատելության խոսքի աննախադեպ մակարդակի՝ առավելապես պայմանավորված ներքին լարվածությամբ, անվտանգության խնդիրներով և Հայաստանի բարդ աշխարհաքաղաքական դիրքով:

Հայաստանի լրատվական դաշտում կանանց նկատմամբ ատելության խոսքի, գենդերային ապատեղեկատվության և խտրականության դրսևորումների մասին իրավիճակի գնահատման համար հիմք են Հայաստանում իրականացված հետազոտությունների ու մշտադիտարկումների արդյունքները, որոնք հաստատում են կանանց կողմնակալ և խտրական լուսաբանման փաստերը մեդիաարտադրանքում, ինչպես նաև բացահայտում թվային տիրույթում, այդ թվում՝ սոցիալական ցանցերում կանանց և հատկապես կին քաղաքական գործիչներին թիրախավորող և նրանց առաջընթացը խոչընդոտող ատելության խոսքի և առցանց բռնության, գենդերային կողմնակալության և գենդերային ապատեղեկատվության շարունակական աճի միտումներ[2]:

Այդ մարտահրավերները առավել տարածում են ստանում հատկապես նախընտրական և ընտրական գործընթացների ժամանակահատվածներում՝

---

[1] RSF World Press Freedom Index 2026 https://rsf.org/en/2026-rsf-index-press-freedom-25-year-low

[2] **Ատելության խոսք -** ցանկացած տեսակի խոսքային, գրավոր կամ վարքագծային հաղորդակցություն, որն արտահայտվում է հարձակվողական, նվաստացուցիչ կամ խտրական լեզվի օգտագործմամբ՝ անդրադառնալով անձին կամ խմբին՝ կրոնի, էթնիկ պատկանելության, ազգության, ռասայի, մաշկի գույնի, ծագման, սեռի կամ այլ ինքնության գործոնի հիման վրա: https://www.un.org/en/genocide-prevention/hate-speech/strategy-plan-action

Կանանց նկատմամբ թվային բռնությունը կամ «կիբեռբռնությունը» - ներառում է տեխնոլոգիաների և առցանց հարթակների տարբեր ձևերի կիրառմամբ թվային ոլորտում կանանց նկատմամբ իրականացվող մի շարք վնասաբեր վարքագծեր և գործողություններ: «Կանանց նկատմամբ թվային բռնություն» եզրույթն օգտագործվում է ընդգծելու այն փաստը, որ այս վնասակար վարքը անհամաչափորեն ուղղված է կանանց և աղջիկների դեմ և դառնում է կանանց նկատմամբ գենդերային բռնության կենտրոնական տարրը (CoE Grevio):

Գենդերային ապատեղեկատվությունը (gendered disinformation) ապատեղեկատվության հատուկ տեսակ է, որը նպատակաուղղված տարածում է կեղծ, մանիպուլացված կամ ապակողմնորոշիչ տեղեկատվություն՝ հիմնված գենդերային կարծրատիպերի վրա և ուղղված կանանց կամ գենդերային այլ խմբերի դեմ:

բացասական ազդեցություն թողնելով ինչպես կին քաղաքական գործիչների վարքագծի, այնպես էլ ընտրողների վրա՝ նվազեցնելով ընտրողների իրազեկված ընտրության հնարավորությունը, իջեցնելով քաղաքական քննարկումների որակը, հանգեցնելով հասարակության պառակտմանը և բևեռացմանը, խաթարելով ընտրությունների բնականոն ընթացքը:

Մարտահրավերներ, որոնց բախվում են կին քաղաքական գործիչները.

Ատելության խոսքի և առցանց բռնության դրսևորումները	**Գենդերային ապատեղեկատվությունը**	**Կին թեկնածուների թերի լուսաբանումը**	**Մեդիագրագիտության պակասը**
լուրջ խոչընդոտ են կանանց քաղաքական ակտիվության համար՝ հարցականի տակ դնելով առհասարակ կանանց մուտքը քաղաքականություն կամ քաղաքական կարիերան շարունակելու նպատակահարմարությունը: Ընտրողների վրա ատելության խոսքի բացասական ազդեցությունը արտահայտվում է հասարակության բևեռացմամբ, ազատ և արդար ընտրությունների միջավայրի խախտմամբ:	դրսևորվում է սեքսիստական կարծրատիպերի վերարտադրման, ֆեյքային մեղադրանքների, արտաքին տեսքի հետ կապված որակումների, ամուսնական կարգավիճակի և բարոյական կերպարի մանիպուլյացիաների միջոցով՝ կին թեկնածուներին վարկաբեկելու նպատակով: Ինչպես և ցանկացած այլ ապակողմնորոշիչ տեղեկությունների տարածումը, այն նվազեցնում է ընտրողների իրազեկված ընտրության հնարավորությունը:	տղամարդ թեկնածուների համեմատ հանգեցնում է լրատվամիջոցների արտադրանքում կանանց կարծիքի թերի ներկայացվածության, խորացնում է կին թեկնածուների նկատմամբ կողմնակալ վերաբերմունքը և ընտրողների շրջանում կասկածի տակ դնում քաղաքական գործընթացների հանդեպ նրանց կոմպետենտության ու իրազեկության աստիճանը:	խոցելի է դարձնում կին թեկնածուներին առցանց հարձակումների, կիբեռբուլինգի/նշավակման, առցանց բռնության և մանիպուլյատիվ տեխնոլոգիաների հանդեպ: Ընտրողների շրջանում մեդիագրագիտության պակասը կարող է հանգեցնել նրան, որ ընտրողները ավելի հեշտ են ենթարկվում տեղեկատվական մանիպուլյացիաների և ապատեղեկատվության ազդեցությանը:

Նշված հիմնախնդիրները առանձնացվել և դասակարգվել են վերջին երկու նախընտրական տարվա (2024-2025 թթ.) ընթացքում Հայաստանում իրականացված հետազոտությունների արդյունքների հիման վրա, որոնք ուսումնասիրում են ատելության խոսքի, գենդերային ապատեղեկատվության, կանանց նկատմամբ առցանց բռնության և մեդիագրագիտության իրավիճակը:

Հիմնական արդյունքներ և թվեր

Ատելության խոսքի ընկալում — հարցվածների 80%-ը համարում է, որ ատելության խոսքը Հայաստանում էական խնդիր է. 66%-ը այն ավելի հաճախ հանդիպել է առցանց, իսկ 45%-ը՝ հանրային վայրերում:

Էթիկական խախտումների տարածում ըստ հարթակների — թվային հարթակներ՝ լրատվական կայքեր՝ 39%, բլոգներ/վլոգներ/փոդքասթներ՝ 36%, հեռուստատեսություն՝ 32%, ամենաքիչը՝ տպագիր մամուլում՝ 14%, ռադիոյում՝ 8%:

Մեդիագրագիտություն — միայն 31%-ն է կարողանում տարանջատել փաստերը կարծիքներից և բացահայտել մանիպուլյացիաները. ընդամենը 18%-ը կարողանում է ճանաչել կասկածելի տեղեկությունը և ստուգել փաստերը[3]:

Կանանց թիրախավորում — հայալեզու առցանց տիրույթում ատելության խոսքը «ահռելի չափերի է հասնում»՝ քաղաքական ուղղվածություն՝ 20.5%, գենդերային ուղղվածություն՝ 42.6%:

Կանանց նկատմամբ վիրավորանքների տեսակներ — թիրախավորված ատելության խոսքի մեջ՝ արտաքին տվյալների հիմքով վիրավորանքներ՝ 14%, սեռական կամ այլ բռնության կոչեր՝ 12%, հայհոյանքներ՝ 20% (այդ թվում սեռական բնույթի՝ 11%)[4]:

Բարձր պաշտոնատար կանանց վրա հարձակումներ — հարցված կին պաշտոնյաների և հասարակական գործիչների 78%-ը ենթարկվել է գենդերային հիմքով թվային հարձակումների, 68%-ը մտածել է հանրային գործունեությունից հրաժարվելու մասին՝ հարձակումների պատճառով[5]:

Ատելության խոսք և խտրական խոսույթ պարունակող 1,635 բառ կամ բառակապակցություն է հայտնաբերվել կին քաղաքական գործիչների հիշատակմամբ ավելի քան 60 հազար հրապարակումների մշտադիտարկման արդյունքում: Խնդրահարույց խոսույթի մեծ մասը տարբեր քաղաքական գործիչների խոսքից մեջբերումներ են եղել[6]:

---

[3] Հայաստանում խոսքի ազատության և մեդիայի սպառման հետազոտություն, Ինտերնյուս, 2024թ.

[4] Կանանց թիրախավորող առցանց ատելության խոսքը Հայաստանում, 2024թ. https://www.allrights.am/wp-content/uploads/2024/09/ARF_Report_Hate_Speech_in_Armenia_2024.pdf

[5] Հայաստանի Հանրապետությունում կանանց նկատմամբ բռնության թվային հարթությունը, ԵԽ. 2024 թ. https://rm.coe.int/arm-2024-report-on-digital-dimension-of-violence-against-women-25-10-2/native/1680b22525

[6] Մշտադիտարկումն իրականացվել է «Կանանց տեղեկատվական-վերլուծական ցանց» ՀԿ-ի կողմից՝ «ProElect-Արևելյան գործընկերությունում ընտրական գործընթացների հաշվետվողականության խթանում քաղաքացիական հասարակության դերակատարների մասնակցության և կարողությունների զարգացման միջոցով» ծրագրի շրջանակներում, 2025 թ.

Հետազոտությունները փաստում են[7], որ գոյություն ունեցող ատելության խոսքը, սեքսիզմը և խտրականությունը **առավել ծանր ազդեցություն են ունենում կանանց վրա**.

- Ատելության խոսքն ուղղված է ոչ միայն քաղաքական դիրքորոշմանը, այլև հաճախ անձնական, չառնչվող հատկանիշներին, ինչը հատկապես վնասում է կանանց:
- Կանանց ընտանիքի անդամներին (երեխաներ, ծնողներ, ամուսիններ, եղբայրներ) ուղղված վիրավորանքներն ու բռնության կոչերը լրացուցիչ ճնշման միջոց են:
- Կանայք, հատկապես հանրային գործունեությամբ զբաղվողները, նշում են, որ առցանց թիրախավորումը կարող է ստիպել նրանց նվազեցնել ակտիվությունը կամ դուրս գալ քաղաքականությունից:
- Թիրախավորված կանայք հաճախ չեն զգում իրավական պաշտպանվածություն և վախի կամ ամոթի պատճառով չեն հաղորդում դեպքերի մասին:

Այս իրավիճակը իր ազդեցությունն է թողնում նաև **քաղաքական գործընթացների վրա.**

- Ցածր մեդիագրագիտությունը դարձնում է հանրությանը ավելի խոցելի մանիպուլյացիաների և գենդերային ապատեղեկատվության նկատմամբ:
- Գենդերազգայուն մոտեցումների բացակայությունը հանգեցնում է կանանց տեսանելիության նվազեցմանը ընտրությունների լուսաբանման ժամանակ. օրինակ՝ 2021 թ. խորհրդարանական ընտրություններում կին թեկնածուների տեսանելիությունը կազմել է միայն 9%, իսկ ՏԻՄ ընտրություններում՝ 4%, այն դեպքում, երբ նրանց ներկայացվածությունը ցուցակներում եղել է, համապատասխանաբար, 37% և 34%[8]:

[7] «Հայաստանում կանանց քաղաքական կարիերայի առանձնահատկությունները» հետազոտություն, ՕքսԵՋեն , EPD, Կանանց տեղեկատվական-վերլուծական ցանց ՀԿ, 2025 թ.
Գենդերային ապատեղեկատվությունը հայաստանյան լրատվամիջոցներում, 2024թ. https://oxygen.org.am/wp-content/uploads/2024/10/GID-MEDIA-report.pdf

[8] «2021 թ. ընտրություններում կին թեկնածուների լուսաբանումը հեռուստաեթերում և լրատվական կայքերում» մշտադիտարկման արդյունքների վերլուծություն. https://oxygen.org.am/wp-content/uploads/2022/02/Final_Report_Coverage-of-female-candidates_Elections-2021_ARM.pdf

- Նպաստում է գենդերային կարծրատիպերի վերարտադրությանը ՁԼՄ-ներում՝ հանրությանը ներկայացվող կնոջ կերպարը հաճախ հիմնված է խտրական նորմերի վրա, ինչը խորացնում է խոչընդոտները ընտրական և քաղաքական ներառականության համար:
- Դարձնում է առցանց միջավայրը ատելության խոսքի և գենդերային ապատեղեկատվության հիմնական տարածման հարթակ՝ մեծացնելով կանանց նկատմամբ ճնշումը և նվազեցնելով նրանց մասնակցությունը հանրային կյանքին:

ԽՆԴՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Կանանց նկատմամբ ատելության խոսքի, գենդերային ապատեղեկատվության և թվային հարձակումների խնդիրը կապված է ավելի լայն՝ սեռի հիմքով խտրականության, հասարակական կարծրատիպերի և մեդիայի վարքագծի հետ և ունի խորքային, բազմաշերտ ազդեցություն կանանց իրավունքների, անվտանգության և քաղաքական մասնակցության վրա:

Միջազգային կառույցների կողմից ընդունված փաստաթղթերը սեռի հիմքով խտրականության և բռնության արգելքների համատեքստում անդրադարձ են կատարում կանանց նկատմամբ ատելության խոսքի և գենդերային ապատեղեկատվության խնդիրներին որպես սպառնալիք ժողովրդավարական արժեքներին, սոցիալական միասնությանն ու կայունությանը և խաղաղությանը : Ուստի խնդիրը միջազգային իրավունքի և ազգային քաղաքականության տեսանկյունից առաջնահերթ է:

Միջազգային փաստաթղթերը՝ ՄԱԿ-ից մինչև Եվրոպայի խորհուրդ և ԵԱՀԿ, միաձայն ընդգծում են, որ խոսքի ազատությունը չի կարող ծառայել որպես պատրվակ՝ պաշտպանելու այն արտահայտությունները, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն հրահրում են խտրականություն, թշնամանք կամ բռնություն: Այդ մոտեցումն արտացոլվում է -ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի (CEDAW) ընդհանուր հանձնարարականներում, Ատելության խոսքի դեմ ՄԱԿ-ի ռազմավարությունում և Ռաբատի գործողությունների ծրագրում.

- **ՄԱԿ-ի փաստաթղթերը՝** Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին

կոնվենցիան, Պեկինի հռչակագիրը և գործողությունների հարթակը, Կանանց նկատմամբ բռնության վերացման մասին հռչակագիրը (VAW Declaration) պահանջում են պետություններից քայլեր ձեռնարկել՝ հաղթահարելու գենդերային կարծրատիպերը, պաշտպանելու կանանց առցանց և իրական միջավայրում և ապահովելու նրանց մասնակցության անվտանգությունը:

- **Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի ընդհանուր հանձնարարականները** (թիվ 19, 23, 33, 35, 36, 40 և ընթացիկ թիվ 41) ընդգծում են թվային հարթակների, տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների (ՏՀՏ) և մեդիայի դերը՝ կանանց նկատմամբ բռնության և խտրականության կանխարգելման մեջ:
- **ՄԱԿ-ի ռազմավարությունը ատելության խոսքի դեմ** և **Ռաբատի գործողությունների ծրագիրն** առաջարկում են կոնկրետ չափանիշներ՝ գնահատելու խոսքի վտանգավորությունը՝ հաշվի առնելով համատեքստը, խոսողի կարգավիճակը, մտադրությունը, բովանդակությունը, տարածման ծավալը և վնասի հավանականությունը: Այս չափանիշները կարևոր են այն առումով, որ դրանք թույլ են տալիս տարբերակել օրինական քննադատությունը և այն խոսքը, որը նպատակ ունի լռեցնել, վարկաբեկել կամ վնասել կանանց՝ հատկապես նրանց, ովքեր զբաղվում են քաղաքականությամբ կամ հասարակական գործունեությամբ:
- **Եվրոպայի խորհուրդը**, **ԵԽԽՎ-ն և ԵԱՀԿ**-ն ընդգծում են, որ առցանց ատելության խոսքն ու գենդերային ապատեղեկատվությունը վտանգ են ժողովրդավարությանը հատկապես ընտրական գործընթացներում:
- **Ստամբուլի կոնվենցիան և** Եվրոպայի խորհրդի Կանանց դեմ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարի հարցերով փորձագիտական խմբի **(GREVIO)** առաջարկությունները դասակարգում են թվային բռնությունը որպես գենդերային բռնության դրսևորում և կոչ են անում անդամ պետություններին համապատասխան միջոցներ ձեռնարկել:

Հայաստանը, լինելով Եվրոպայի խորհրդի անդամ և ՄԱԿ-ի կոնվենցիաների կողմ, հանձնառու է ներդնել մեխանիզմներ, որոնք կկանխեն խտրական խոսույթը հանրային և քաղաքական միջավայրում:

Հայաստանի Հանրապետությունում ատելության խոսքի և խտրականության դեմ պայքարը կարգավորվում է ՀՀ Սահմանադրությամբ, քրեական, քաղաքացիական, վարչական օրենսդրությամբ և այլ օրենքներով, ինչպես նաև ՁԼՄ-ների ինքնակարգավորման մեխանիզմներով.

- **ՀՀ Սահմանադրությունը** ներառում է խոսքի ազատության երաշխիքներ և հակախտրական դրույթներ (հոդվածներ 3, 23, 29, 30, 31, 42, 77):
- **ՀՀ քրեական օրենսգիրքը** սահմանում է ատելության խոսքի, բռնության կոչերի և դրանց զանգվածային տարածման համար պատասխանատվություն (օրինակ՝ հոդված 151, 329, 330):
- **ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-ին հոդվածը** կարգավորում է զրպարտության կամ վիրավորանքի միջոցով անձի պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման կարգը և պայմանները:
- **«Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածն** ամրագրում է հավասարության սկզբունքը և արգելում է խտրականությունը սեռի հիմքով:
- **Մեդիա ոլորտը և գովազդը կարգավորող օրենսդրությունը** սահմանում է տեսալսողական մեդիային, գովազդին և զանգվածային լրատվությանը վերաբերող նորմեր, որոնք արգելում են խտրական և վիրավորական բովանդակությունը.

«Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենք, 2003 թ. *— սահմանում է ՁԼՄ-ների գործունեության և ինքնակարգավորման մեխանիզմների հիմքերը, ներառյալ՝ պատասխանատվությունը խտրական և վիրավորական բովանդակության տարածման համար:*

«Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենք, 2020 թ., հոդված 9 *— արգելում է տեսալսողական հաղորդումները, որոնք հետապնդում են ազգային, ռասայական, սեռային և կրոնական հատկանիշներով խտրականություն քարոզելու նպատակ: **Հոդված 57** — արգելում է կանանց նկատմամբ բռնություն քարոզող հաղորդումները:*

«Գովազդի մասին» ՀՀ օրենք, 1996 թ., հոդված 8 *— արգելում է գովազդում վիրավորական արտահայտություններ, համեմատություններ և պատկերներ՝ ռասայի, ազգության, մասնագիտության, սոցիալական ծագման, տարիքային խմբի, սեռի, լեզվի, կրոնի և այլ հատկանիշների հիմքով:*

ՁԼՄ-ների էթիկայի դիտորդ մարմնի Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիրը[9] *նախատեսում է ազգային, կրոնական թշնամանք և*

[9] Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիր. https://ypc.am/wp-content/uploads/2024/06/Code-of-Ethics_arm_edites_May-18-2024.docx.pdf

անհանդուրժողականություն, քաղաքական, սոցիալական, սեռական և լեզվական հայտանիշներով խտրականությունը, ատելության խոսքը, ինչպես նաև նախապաշարված վերաբերմունքը բացառող դրույթներ, անդրադառնում է ԶԼՄ-ների կողմից ատելության խոսքը մոդերացնելու անհրաժեշտությանը:

Ընդհանուր առմամբ, Հայաստանի օրենսդրական դաշտը ձևավորում է համակարգված հիմք ատելության խոսքի և ապատեղեկատվության դեմ պայքարի համար: Դրա հետ մեկտեղ առկա են մի շարք բացեր.

- ՀՀ օրենսդրության մեջ չկա մեկ միասնական և համապարփակ սահմանում, թե կոնկրետ ինչ է ատելության խոսքը:
- Ատելության խոսքի համար նախատեսված չեն քաղաքացիաիրավական և վարչաիրավական պատասխանատվության միջոցներ, քրեական պատիժը կիրառվում է միայն ծայրահեղ դեպքերում, իսկ ավելի «մեղմ», բայց կործանարար խտրական խոսքը մնում է անպատիժ:
- «Զանգվածային լրատվության մասին» օրենքը թույլ է տալիս ազատել լրատվամիջոցներին պատասխանատվությունից, եթե նրանք մեջբերում են այլոց խոսքը, ինչը կարող է հնարավորություն տալ հարթակ տրամադրել ատելություն սերմանող անձանց:
- Մեկնաբանությունների դաշտի անվերահսկելիությունը. օրենսդրությունը հստակ չի սահմանում լրատվամիջոցների պատասխանատվությունը իրենց նյութերի տակ օգտատերերի խտրական մեկնաբանությունների մոդերացիայի համար:
- Լրատվամիջոցների ինքնակարգավորման համակարգն ինստիտուցիոնալ կայացման խնդիր ունի:

Խնդիրներ կան նաև օրենքների կիրառելիության և գործնական արդյունավետության հարցում. հսկողության մեխանիզմների և մոնիթորինգի սահմանափակությունը, թվային հանցագործությունների բացահայտման դժվարությունները, գենդերազգայուն մոտեցումների պակասը, իրավական մեխանիզմների ոչ բավարար հասանելիությունը և կիրառման անհավասարությունը հաճախ խոչընդոտում են ատելության խոսքից տուժածների արդյունավետ պաշտպանությունը:

Այս բացերի լրացումը թույլ կտա ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ կին քաղաքական և հասարակական գործիչները և այլ հանրային խմբերը պաշտպանված կլինեն ոչ միայն թղթի վրա, այլև իրական կյանքում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում ատելության խոսքը, գենդերային ապատեղեկատվությունը և կանանց նկատմամբ առցանց բռնությունը դարձել են լուրջ մարտահրավեր ոչ միայն կանանց քաղաքական մասնակցության, այլև ժողովրդավարական գործընթացների կայունության համար: Հետազոտությունները փաստում են, որ այս երևույթները խորացնում են հասարակության բևեռացումը, նվազեցնում ընտրողների իրազեկված ընտրության հնարավորությունը և խաթարում ընտրությունների բնականոն ընթացքը: Կանայք, հատկապես հանրային գործունեությամբ զբաղվողները, հաճախ չեն զգում իրավական պաշտպանվածություն, իսկ թվային հարձակումները ստիպում են նրանց մտածել քաղաքականությունից հեռանալու մասին:

Մեդիագրագիտության ցածր մակարդակը և մեդիայի կողմից գենդերային կարծրատիպերի վերարտադրությունը լրացուցիչ խոչընդոտներ են ստեղծում՝ սահմանափակելով կանանց տեսանելիությունը և արժեզրկելով նրանց դերը հանրային կյանքում: Թվային միջավայրը՝ որպես հիմնական տեղեկատվական հարթակ, դարձել է ատելության խոսքի և ապատեղեկատվության հիմնական տարածման միջոց, ինչը պահանջում է համակարգային և համապարփակ մոտեցում:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. **Իրավական և ինստիտուցիոնալ բարեփոխումներ**
    - Հստակեցնել ատելության խոսքի, խտրականության և գենդերային ապատեղեկատվության դեմ օրենսդրական կարգավորումները, ապահովել օրենքների կիրառման մեխանիզմները:
    - Ստեղծել արագ արձագանքման մեխանիզմներ՝ թվային հարձակումների և առցանց բռնության դեպքերի համար:
    - Ապահովել ատելության խոսքից, առցանց բռնությունից և խտրական խոսույթից տուժած կանանց իրավական և հոգեբանական աջակցությունը:
2. **Մեդիայի պատասխանատվության բարձրացում**

- ՁԼՄ-ներում ներդնել գենդերազգայուն քաղաքականություն՝ կանանց և տղամարդկանց հավասարակշռված լուսաբանում ապահովելու համար:
- ՁԼՄ-ների մոնիթորինգի և մոդերացիայի գործիքների զարգացում՝ լրատվական հոսքերում և մեկնաբանությունների դաշտում ատելության խոսքի կանխարգելման նպատակով:
- Լրատվամիջոցների ինքնակարգավորման համակարգի ինստիտուցիոնալ կայացում , լրագրողների կողմից էթիկական չափանիշների պահպանման խթանում:

3. **Մեդիագրագիտության զարգացում**
   - Հանրային արշավներ՝ ապատեղեկատվության և մանիպուլյացիաների դեմ պայքարի համար:
   - Լրագրողների և քաղաքական գործիչների վերապատրաստում՝ գենդերային հավասարության և պատասխանատու հաղորդակցության թեմաներով:
4. **Քաղաքական և ընտրական գործընթացների պաշտպանություն**
   - Ընտրական ժամանակահատվածներում հատուկ մոնիթորինգի մեխանիզմների ներդրում՝ կին և տղամարդ թեկնածուների հավասարակշռված լուսաբանման ւ համար:
   - Կուսակցությունների և խորհրդարանի ներգրավվածություն՝ կանանց անվտանգ մասնակցությունը ապահովելու, ատելության խոսքի, առցանց բռնության, խտրականության, սեքսիզմի դրսևորումները բացառելու նպատակով:
   - Կանանց քաղաքական մասնակցության խթանում՝ խտրականության և կարծրատիպերի դեմ պայքարի միջոցով:
   - Ապահովել ԿԸՀ-ի հաջողված փորձի շարունակականությունը, այն է՝ բոլոր մակարդակների ընտրություններում սեռով տարանջատված տվյալների ամփոփ վերլուծության հրապարակում:
   - Ներառել ընտրությունների կազմակերպման համար պատասխանատու մարմինների գործունեության շրջանակի մեջ գենդերային բաղադրիչը՝ ընտրությունների քարոզարշավի ընթացքում և լուսաբանման հարցում տղամարդկանց և կանանց միջև առկա անհավասարությունները,

ատելության խոսքի, խտրական վերաբերմունքի, սեքսիզմի դրսևորումները կանխելու նպատակով:

5. **Համագործակցություն միջազգային կառույցների հետ**
    - ՄԱԿ-ի, ԵԽ-ի և ԵԱՀԿ-ի չափանիշների և ուղեցույցների կիրառում՝ ատելության խոսքի, ապատեղեկատվության դեմ պայքարի տեղական քաղաքականությունների մշակման ժամանակ:
    - Միջազգային փորձի կիրառում՝ թվային բռնության և գենդերային ապատեղեկատվության դեմ պայքարի արդյունավետ մեխանիզմներ ներդնելու նպատակով:

***

Այս համառոտագիրը ստեղծվել է «Կանանց տեղեկատվական-վերլուծական ցանց» ՀԿ-ի (WomenNet NGO) «Ընտրական գործընթացներում գենդերազգայուն հաղորդակցության խթանում և ապատեղեկատվության կանխարգելում» ծրագրի կողմից՝ «ProElect-Արևելյան գործընկերությունում ընտրական գործընթացների հաշվետվողականության խթանում քաղաքացիական հասարակության դերակատարների մասնակցության և կարողությունների զարգացման միջոցով» ծրագրի շրջանակներում:

Ծրագիրն իրականացվում է Transatlantic Foundation-ի և ERIM-ի գործընկերությամբ և ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից: Ծրագրի նպատակն է ապահովել՝ Արևելյան գործընկերության երկրների քաղաքացիական հասարակության դերակատարները ներգրավված, կարողունակ և տեղեկացված լինեն ընտրությունների մշտադիտարկման, ինչպես նաև ժողովրդավարական հաշվետվողականության մեխանիզմների խթանման մասին: